

Հաստատված է
« Հայաստանի հաշվապահների
և աուդիտորների ասոցիացիայի»
Խորհրդի N 10 նիստում
«08» հոկտեմբերի 2013թ.
խորհրդի նախագահ
Ա. Չիլինգարյան

ԿԱՐԳ

“Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա” հասարակական կազմակերպության անդամների շարունակական մասնագիտական զարգացման գործառույթների

(Լրացված է ՀՀԱԱ Խորհրդի N5 նիստում, 02 դեկտեմբերի 2015թ.)

1. Սույնով կարգավորվում են “Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա” հասարակական կազմակերպության /այսուհետ՝ ՀՀԱԱ/ անդամների /լիիրավ անդամների/ շարունակական մասնագիտական զարգացման /ՇՄԶ/ հետ կապված հարաբերությունները:
2. ՀՀԱԱ շարունակական մասնագիտական զարգացման կարգը կազմված է Հաշվապահների միջազգային դաշնության՝ ՀՄԴ, (International Federation of Accountants, IFAC) կրթական 7-րդ ստանդարտի պահանջների հիման վրա /Handbook of International Education Pronouncements/: Հաշվապահների միջազգային դաշնության (International Federation of Accountants, IFAC) կրթական ստանդարտների հիման վրա ՀՀԱԱ անդամի շարունակական մասնագիտական զարգացման իրականացումը հանդիսանում է ՀՀԱԱ կողմից ստանձնած ՀՄԴ անդամակցության պարտադիր պահանջ /Statement of Membership Obligation 2 /:
3. Շարունակական մասնագիտական զարգացման նպատակն է տնտեսության տարբեր բնագավառներում ՀՀԱԱ անդամից պահանջվող մասնագիտական աշխատանքի բարձր ստանդարտների ապահովման համար անհրաժեշտ գիտելիքների պարբերաբար նորացումը: Այն հնարավորություն կտա հանրությանը տրամադրել բավարար երաշխիքներ, որ ՀՀԱԱ անդամը տիրապետում են հաշվապահական հաշվառման, հարկային, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, աուդիտի և մասնագիտությանը առնչվող ոլորտների վերաբերյալ մասնագիտական արդի գիտելիքներին:

4. ՀՀԱԱ-ին անդամագրվելուց սկսած յուրաքանչյուր օրացուցային տարվա համար ՀՀԱԱ անդամը պետք է առնվազն 40 ժամ մասնակցի շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումներին:
5. Սույն կարգի իմաստով շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումներին մասնակցություն է համարվում՝
 - Մասնակցությունը կամ դասախոսությունը մասնագիտական դասընթացներին, մասնագիտական թեմաներով անցկացված սեմինարներին և /կամ/ խորհրդակցություններին, սեմինարների վարումը,
 - Մասնակցությունը մասնագիտական հանձնաժողովների աշխատանքներին,
 - ՀՀԱԱ որակավորման քննությունների քննաթերթերի պատրաստումը, վերանայումը,
 - Այլ միջոցառումներ, մասնավորապես՝ մասնագիտական հետազոտությունների կամ հոդվածների պատրաստումը, ձեռնարկների, մեթոդական նյութերի, իրավական ակտերի նախագծերի մշակումը, մասնագիտական թարգմանությունների իրականացումը:
6. Մասնագիտական է համարվում հաշվապահական, աուդիտորական, հարկային, ֆինանսական, կառավարման, մասնագիտությանը առընչվող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի աշխատանքները:
7. Շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումների մասնակցության ժամերի հաշվարկման կարգը ներկայացված է սույն կարգի հավելված 1-ում:
8. ՀՀԱԱ-ին անդամագրվելուն հաջորդող յուրաքանչյուր տարվա համար ՇՄԶ միջոցառումներին մասնակցելու վերաբերյալ գրանցումները /այսուհետ՝ գրանցումներ/ անդամի կողմից կատարվում են “Շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումների մասնակցության” հայտարարագրում (Հավելված 2) և ներկայացվում ՀՀԱԱ՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:
9. Գրանցումներում ներառված տվյալների արժանահավատությունը պարզելու նպատակով անդամից կարող է պահանջվել՝ տալու պարզաբանումներ,

ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, տրամադրել դրանք հաստատող փաստաթղթեր:

10. Տարեկան շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումների մասնակցության 40 ժամը չլրացնելու դեպքում անդամին տրվում է զգուշացում՝ հարապարակելով այն ՀՀԱԱ կայքում, իսկ զգուշացումից հետո 2 տարվա /խախտման տարվա և դրան անմիջապես հաջորդող տարվա/ ընթացքում 80 ժամը չլրացնելու դեպքում անդամակցությունը “Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա” հասարակական կազմակերպությանը համարվում է դադարեցված.
11. Հատուկ հանգամանքներում, օրինակ՝ վատառողջ լինելու, Հայաստանի Հանրապետությունից երկար ժամանակով բացակայելու և այլ դեպքերում, եթե անդամը հնարավորություն չի ունենում լրացնել շարունակական մասնագիտական ՇՄԶ միջոցառումներին մասնակցության ժամերը, ապա նա պետք է գրավոր տեղեկացնի ՀՀԱԱ-ին համապատասխան հիմնավորումներով:
12. Գրանցումները պահպանվում են յուրաքանչյուր անդամի անհատական գործում:

“Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա”
 հասարակական կազմակերպության անդամների շարունակական
 մասնագիտական զարգացման գործառույթների կարգի
 Հավելված 1

ՇՄՁ միջոցառումներին մասնակցության ժամերի հաշվարկման կարգ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ՀՀԱԱ անդամի կողմից ՇՄՁ միջոցառումներին մասնակցության ժամերի հաշվարկման կարգը

Հ/հ	ՇՄՁ միջոցառումը	ՇՄՁ միջոցառմանը մասնակցության համար հաշվարկվող ժամերը	Լրացուցիչ պայմաններ (ըստ պահանջի)
1.	դասախոսությունը մասնագիտական դասընթացների, սեմինարների վարումը	տվյալ դասընթացի, սեմինարի ծրագրերով նախատեսված ժամերին համապատասխան	ներկայացվում է հիմնավորում (վկայականի պատճեն, տեղեկանք և այլն)
2.	մասնակցությունը մասնագիտական թեմաներով անցկացված (այդ թվում առցանց ռեժիմով) դասընթացներին, սեմինարներին և (կամ) խորհրդակցություններին	ըստ մասնակցության ժամերի	ներկայացվում է հիմնավորում (վկայականի պատճեն, տեղեկանք և այլն)
3.	մասնակցությունը ՀՀԱԱ մասնագիտական հանձնաժողովների աշխատանքներին	ըստ մասնակցության ժամերի տարեկան առավելագույնը 10 ժամ ,	ներկայացվում են նիստերի արձանագրությունից քաղվածք
4.	ՀՀԱԱ որակավորման քննությունների հարցաթերթերի պատրաստումը	մեկ առարկայի գծով հարցաթերթիկը` 10 ժամ,	ներկայացվում է ՀՀԱԱ գործադիր մարմնի կողմից տրված տեղեկանքը
5.	ՀՀԱԱ որակավորման քննությունների վերանայումը	մեկ առարկայի գծով հարցաթերթիկը` 5 ժամ,	ներկայացվում է ՀՀԱԱ գործադիր մարմնի կողմից տրված տեղեկանքը
6.	մասնագիտական հետազոտությունների, հոդվածների պատրաստումը, ձեռնարկների, մեթոդական նյութերի, իրավական ակտերի նախագծերի մշակումը, մասնագիտական թարգմանությունների իրականացումը:	մեկ տպագիր էջը` 3 ժամ տարեկան առավելագույնը յուրաքանչյուր ոլորտի համար` 30 ժամ	ներկայացվում են հոդվածների և այլ նյութերի պատճենները

“Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա”
հասարակական կազմակերպության անդամների շարունակական
մասնագիտական զարգացման գործառույթների կարգի
Հավելված 2

Հայտարարագիր

Շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումների մասնակցության

Մասնակցի անուն ազգանունը _____

Ժամանակաշրջան 20____թ.

h/h	ՇՄԶ միջոցառման անվանումը	Ամսաթիվը	Վայրը /հասցե/	Տևողությունը

Պարտավորվում եմ սույն հայտարարագրում նշված ժամանակաշրջանի ավարտից հետո առնվազն 3 տարվա ընթացքում պահպանել հայտարարագրում ներառված՝ Շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումներին մասնակցությունը հիմնավորող (հաստատող) փաստաթղթերը և դրանք ըստ պահանջի ներկայացնել ՀՀԱԱ:

Ստորագրություն

Ամսաթիվ